



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

24 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացի Արման Այվազյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Քաղաքացի Արման Այվազյանը 05.06.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետեւյալին.

Վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը՝ դիմողը նշում է, որ այն «չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին»: Ըստ դիմողի՝ «Որոշակիության սկզբունքը խախտող

քրեական օրենքն ի սկզբանե չի պատկանում սահմանադրական իրավակարգին, այն է՝ օրենք չէ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության եւ հատկապես ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով»։ Դիմողի պնդմամբ՝ օրենսդիրը թույլ է տվել, որ ինքը քրեական պատասխանատվության ենթարկվի մի արարքի համար, որի պատժելիությունը գործող օրենքով հստակ սահմանված չէ։

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա դիմողի պնդմամբ՝ այն թույլատրելով դատարանին վերադարձնել ամբաստանյալին մեղսագրվող արարքը, խախտում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի չեզոքության սկզբունքը։ Դիմողի պնդմամբ՝ դատարանն իբրև արդարադատության մարմին իրականացրել է արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ։

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում ,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները։

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Քաղաքացի Արման Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ

հողվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

24 հունիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-6